

---

ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅԵՑՈՒ «ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՆ» ԳՐԱԲԱՐ  
ԲՆԱԳՐԻ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ

Դարձվածքները լեզվի բառապաշարի յուրահատուկ միավորներ են, որոնք սերտորեն կապված են տվյալ լեզվի ոչ միայն բառակազմական համակարգի, այլև լեզվակիր հանրության լեզվամտածողության և աշխարհընկալման առանձնահատկությունների հետ: Դարձվածքները ժողովրդական լեզվամտածողության ծնունդ են, ստեղծվում են նախ խոսակցական լեզվում, ապա անցնելով գրական մշակման որոշակի ճանապարհ՝ մուտք են գործում գրականություն, այնուհետև գիտության լեզու՝ ի վերջո ամրակայվելով լեզվի ընդհանուր բառապաշարում որպես բառարանային միավորներ: Պետրոս Բեդիրյանի համոզմամբ, դարձվածքների ստեղծումը հար և նման է ժողովրդական բանահյուսության ստեղծմանը. «Նրանք ևս, վերջինիս նման, ծագումով անհայտ են, մշակումով՝ հավաքական»<sup>1</sup>: Թեև պետք է նշել, որ գեղարվեստական շատ ստեղծագործություններ դարձվածքների անսպառ աղբյուր են, ինչպես օրինակ՝ Աստվածաշունչ մատյանը, որը աշխարհի բոլոր ազգերի համար թևավոր պատկերային արտահայտությունների սրբազան ակունք է, վերագրային և ազգային մտածողության խառնարան: Ինչպես պատկերավոր սահմանում է Վարազ Առաքելյանը. «Մեր թարգմանիչները հայ ժողովրդի լեզվի ընդերքից դարձվածքների ամբողջ գետեր են բխեցրել և դրանք ծովացրել են Աստվածաշնչի մեջ իբրև հարստություն և իբրև խոսքի ոճավորման գեղեցիկ միջոցներ»<sup>2</sup>: Հայոց բառապաշարն իր ձևավորման և զարգացման տարբեր շրջաններում դարձվածքներով համալրվել է նաև շնորհիվ Խորենացու, Բուզանդի, Եղիշեի պատմությունների, Գրիգոր Նարեկացու Մատյանի: Այսինքն՝ անհատների դերը դարձվածքների, հատկապես դարձվածային արտահայտությունների ծագման և ամրակայման գործընթացում հույժ կարևոր է:

Դարձվածքների առաջացման և կիրառության հիմնական խթանը խոսքի ոճավորումն է, այն գունեղ և պատկերավոր դարձնելը: Այս կապակցությունների ձևավորման ընթացքում, լեզվական գործոններին զուգահեռ, որպես կանոն, վճռորոշ են հոգեբանական և տրամաբանա-

---

<sup>1</sup> Պ. Ս. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր., 1973, էջ 38:

<sup>2</sup> Վարազ Առաքելյան, Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Եր., 1984, էջ 35:

կան տարբեր գործողություններ, ինչպես օրինակ՝ նմանակումը, նույնականացումը, զուգորդումը, առընթերությունը, հակադրությունը, չափազանցումը և այլն: Մանուկ Աբեղյանի բնորոշմամբ, դարձվածքների առաջացումը սերտորեն կապված է բառերի և նրանց կապակցությունների իմաստափոխության հետ, որը սկզբից կատարվում է տարերայնորեն, հետո ամրակայվում կրկնությունների միջոցով. «Ոչ միայն առանձին բառերի նշանակությունն է փոխվում, այլ նաև բառերի կապակցությունների: Դրանք սկզբում միայն պատահաբար են առնվում նոր նշանակությամբ, բայց այս վերջինը կրկնվելով դառնում է սովորական: Բառերի այսպիսի նորիմաստ կապակցությունները սովորաբար կոչվում են դարձվածներ, որոնք, սակայն, մի բառի նշանակություն են ստանում և կարող են նաև մի բարդ բառ համարվել»<sup>3</sup>:

Դարձվածքների ուսումնասիրությունը կատարվում է երկու մակարդակներով՝ համաժամանակյա և տարժամանակյա: Ելակետը դարձվածաբանական համաժամանակյա քննություններն են, որոնք թույլ են տալիս բացահայտել լեզվի զարգացման առանձին փուլին բնորոշ դարձվածքների իմաստային և կառուցվածքային հիմնական տիպերը, ապա արդեն տարժամանակյա կտրվածքով դրանք համեմատվում են, բացահայտվում են բառակապակցությունների վերաիմաստավորման պատճառները, լեզվի տարբեր շրջաններում գործող դարձվածքային միավորների ընդհանրությունները և տարբերությունները: Այս տեսանկյունից գրաբարյան դարձվածքները հայկական լեզվամտածողության համայնապատկերի վերականգնման անսպառ շտեմարան են: Արդի արևելահայերենի կամ արևմտահայերենի տարբերակների հետ զուգադրահամեմատական քննությունը հնարավորություն է տալիս բացահայտելու դրանց ներքին ժառանգորդական կապը, ինչպես նաև տիպաբանական տեղաշարժերը:

Մ. Աբեղյանը «Հայոց լեզվի տեսության» մեջ, բնութագրելով աշխարհաբարյան դարձվածքների իմաստային դաշտը, ցույց է տալիս, որ այն ծագում է գրաբարյան շրջանում այդ բառերի ունեցած ուղղակի նշանակություններից, որոնք ժամանակի ընթացքում ջնջվում են, բայց դարձվածքի մեջ պահպանվում, ինչպես օրինակ՝ *ձեռք տալ* դարձվածքի դեպքում, գրաբարում *ձեռն տալ ումեք* նշանակում էր «օգնել», *ձեռն-տուութիւն*՝ «օգնություն»: Աշխարհաբարում *ձեռ տալ* դարձվածը ժառանգել է հին նշանակությունը<sup>4</sup>:

Հայերենագիտության մեջ գրաբարի դարձվածքների տարբեր քննություններ են կատարվել, սակայն ցայսօր դեռ չունենք առանձին ուսումնասիրություններ, որտեղ պատշաճ խորությամբ նկարագրված կլինեն գրաբարի երեք ենթաշրջանների՝ դասական, հետդասական և

<sup>3</sup> Մանուկ Աբեղյան, Երկեր, Զ, Եր., 1974, էջ 124:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղը, էջք 125-126:

նախամիջին, դարձվածքային կառուցատիպերն իրենց իմաստային դաշտերով: Ջուտ գրաբարյան կապակցություններին (ոչ միայն կայուն կամ փոխաբերական իմաստ ունեցող) է նվիրված Վ. Քոսյանի հիմնարար աշխատությունը, որը վեր է հանում գրաբարում գոյականի, ածականի, բայի և մակբայի բառակապակցություններ ստեղծելու շարահյուսական հիմքերը, սակայն, այս աշխատանքում դարձվածքները, որպես բառակապակցության ինքնուրույն տեսակ, չեն նկարագրվում և դասակարգվում, այլ ներկայացվում են լրացում-լրացյալի շարահյուսական տարբեր հարաբերություններ արտահայտող օրինակների տեսքով<sup>5</sup>:

2012 թ. լույս ընծայվեց գրաբարի բառապաշարի խորագիտակ ուսումնասիրող Ռ. Ղազարյանի «Գրաբարի դարձվածաբանական բառարանը», որը միակն է իր տեսակի մեջ, և, ցավոք, այն հրապարակվեց գիտնականի մահից հետո, նրա ձեռագիր նյութերի հիման վրա: Բառարանի առաջաբանում հետազոտողը նշում է, որ իր նպատակն է եղել ըստ հնարավորին ի մի բերել գրաբարի դարձվածքներն ու կայուն բառակապակցությունները, որոնք վկայված են 5-11-րդ դարերի ինքնուրույն և թարգմանական գրականության մեջ<sup>6</sup>: Սակայն որոշ սկզբնաղբյուրներ տարբեր պատճառներով իրեն անհասանելի են եղել, ուստի ՆՀԲ-ից է քաղել որոշ դարձվածքային միավորներ բառարանում տեղ գտած հեղինակային վկայություններով: Կարճառոտ նախաբանն ավարտվում է հետևյալ հեռահար արձանագրումով. «Գրաբարի դարձվածաբանությունը, թվում է, թե անսպառ է: Այն համեմատաբար իր ամբողջական տեսքով ներկայացնելիս անհրաժեշտ է տևական ժամանակ: Չենք կասկածում, որ հետագա ուսումնասիրողների ջանքերը առիթ կձառայեն ստեղծելու գրաբարի դարձվածաբանության ավելի ընդգրկուն բառարան»<sup>7</sup>:

Այս նպատակի ծիրում ուսումնասիրության առարկա ենք դարձրել Մատթեոս Ուռուհայեցու «Ժամանակագրութիւն» երկում վկայված դարձվածքները և դարձվածքային արտահայտությունները, որոնց զգալի մասը ընդգրկված չէ հիշյալ բառարանում: 11-12-րդ դարերի մատենագրի ընտրությունը պայմանավորված է երկու հանգամանքով. Ա) սա արդեն գրաբարի՝ իբրև համաժողովրդական խոսակցական լեզվի մայրամուտն էր, 11-րդ դարը, գրաբարի գիտական շրջանաբաժանման համաձայն, եզրափակում է մեր առաջին գրական լեզվի ընդհանուր գործառույթյան ժամանակահատվածը: Բ) 12-րդ դարը համարվում է միջին գրական հայերենի սկիզբը, սակայն բոլորին քաջ հայտնի է, որ գրաբարը, չլինելով իսկ խոսակցական հաղորդակցման լեզու, երկար

<sup>5</sup> Տե՛ս Վ. Ա. Քոսյան, Գրաբարի բառակապակցությունները, Եր., 1980:

<sup>6</sup> Տե՛ս Ռ. Ղազարյան, Գրաբարի դարձվածաբանական բառարան, Եր., 2012, էջ 9:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 10:

ժամանակ՝ մինչև 18-րդ դարի վերջը, եղել է գրավոր հաղորդակցման հիմնական լեզուն: Այս շրջանի գրաբարն արդեն հարստանում էր միջին հայերենի, բարբառների տարբեր կառույցներով, ժողովրդախոսակցական բազմաթիվ դարձվածքներ մուտք էին գործում ոսկեդենիկ գրաբար՝ արտահայտելով նոր ժամանակների լեզվամտածողությունը, քերականական նոր՝ ինքնուրույն և փոխառյալ իրակությունները: Այսինքն՝ Ուռհայեցու «Ժամանակագրութեան» մեջ վկայված դարձվածքները երևան են բերում գրաբարյան դարձվածքների պատմական զարգացման միտումները՝ կառուցվածքի, շարադասության, արտահայտած ձևաբանական և շարահյուսական հարաբերությունների, ինչպես նաև իմաստափոխության առումով:

Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրութիւն»-ից դուրս ենք գրել 23 դարձվածքային արտահայտություն, 235 դարձվածք, որոնց բացարձակ մեծամասնությունը՝ 196-ը, բայ գերադաս անդամով դարձվածքներ են, գոյականի, ածականի արժեքով անվանական դարձվածքները 31-ն են, մակբայականները՝ 6-ը: Ուռհայեցին իր ժամանակագրությունը ջանացել է շարադրել պատկերավոր, գրական պերճ ոճով, բայց տեղ-տեղ ժողովրդական, անգամ բարբառային դարձվածքներով՝ **հարցուկ լինել** (154), **ի նստուկ լինել** (154): Որպես սկզբնաղբյուր օգտագործել ենք «Ուսանողի գրադարան» մատենաշարի այն հրատարակությունը, որտեղ զուգահեռաբար ներկայացված են գրաբար և աշխարհաբար տեքստերը (գրաբար բնագիրը Մամբրե Մելիք-Ադամյանի և Ներսես Տեր-Միքայելյանի, իսկ աշխարհաբար փոխադրությունը՝ Հրաչ Բարթիկյանի)<sup>8</sup>: Գրաբար և աշխարհաբար տեքստերի զուգադրումը թույլ է տվել բացահայտել քաղված դարձվածքների պատմական անցումը արևելահայերենին: Հրաչ Բարթիկյանի բարձրարժեք թարգմանությունը շատ դեպքերում վկայում է, որ թարգմանելիս եթե անգամ չի պահպանվել կիրառված դարձվածքի գրաբարյան կառուցատիպը, նրա բովանդակությունն արտահայտվել է նույնիմաստ աշխարհաբարյան համարժեք դարձվածքով, որի մեջ միանշանակ լինում են գրաբարյան սկզբնաձևից ժառանգված ընդհանուր միավորներ: Բերենք բնութագրական օրինակներ Ուռհայեցու գրաբար բնագրից և նրա աշխարհաբար թարգմանությունից՝ *խաղաղական մահ- բնական մահ, անգնելի գերի- չփրկագնվող գերի, քարայտակա առնել- հիմնահատակ կործանել, ի սուր սուսերի մաշել- սրի քաշել, ոխս առնուլ ի սիրտ- ոխը սրտում կապել, ի բերան սրոյ կոտորել- սրի քաշել, սեղան արկանել- սեղան բացել, գինեմխեալ լինել- գլուխը գինուց տաք լինել, ի վերին երեսս խաղաղութիւն առնել- առե-*

<sup>8</sup> Տե՛ս **Մատթեոս Ուռհայեցի**, Ժամանակագրութիւն, Եր., Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 1991: Շարադրանքում բերված օրինակների կողքին կնշենք այս հրատարակության համապատասխան էջերը:

րես հաշտվել, մերկացուցանել գուուսեր ի պատենից- սուր բարձրաց- նել, սուր ճոճել և այլն:

Մինչ գրաբարյան դարձվածքների կառուցվածքային և իմաստա- յին քննությունը սահմանենք «դարձվածք» հասկացությունը՝ իր հիմնա- կան բնութագծերով: Դարձվածքը փոխաբերական վերաիմաստավոր- ման ենթարկված կայուն բառակապակցության տեսակ է, որի կազմում բաղադրիչներն ունեն սերտաճման տարբեր աստիճան: Դարձվածքը բովանդակային մակարդակում, այսինքն՝ իմաստաբանորեն անտրո- հելի է, արտահայտում է նոր, ամբողջացած գաղափար՝ առանձին բա- ղադրիչների որոշակի վերաիմաստավորմամբ, իսկ կառուցվածքային մակարդակում բոլոր բաղադրիչները (կամ դրանցից գոնե որևէ մեկը) անփոխարինելի են: Ի տարբերություն ազատ կամ շարահյուսական կապակցությունների (որոշիչ - որոշյալ, հատկացուցիչ - հատկացյալ, ստորոգյալ - խնդիր, ստորոգյալ - պարագա)՝ դարձվածքներն ինքնին տվյալ խոսքային իրադրության մեջ ամեն անգամ չեն կազմավորվում, այլ իբրև բառապաշարային արդեն պատրաստի միավոր վերարտադր- վում են, անտրոհելի միավորներ են, շարահյուսական մակարդակում հանդես են գալիս որպես նախադասության մեկ անդամ՝ անկախ իրենց կազմում առկա բառային միավորների քանակից, ձևաբանորեն բնու- թագրվում են իբրև մեկ խոսքի մաս: Բնորոշ է, որ գրաբարյան շատ դարձվածքներ արդի հայերենում անմիջաբար դարձել են բառեր, ինչ- պես օրինակ՝ **հալածական առնել** (296) - հալածել, **կալ ի հնազանդու- թիւն** (296) - հնազանդվել, **հիմն արկանել** (82) - հիմնադրել, **արգելական առնել** (86) - արգելել, **ի պատուհաս արկանել** (456) - պատուհասել, **վնաս առնել** (456) - վնասել, **առնել տօն** (34) - տոնել, տոնախմբել, **ցաւ հասանել** (370) - հիվանդանալ, **երկայնել զբանս** (414) - երկարաբանել և այլն: Ինչպես վերն արդեն նշել ենք, դարձվածքները, օժտված լինելով փոխաբերական իմաստով, ունեն հուզարտահայտչական մեծ լիցք, դրսևորում են խոսողի հուզագագացական վերաբերմունքը, ոճականո- րեն չեզոք չեն, պատկանում են բառապաշարի որոշակի շերտերի և գործառական հստակ ոլորտներ ունեն<sup>9</sup>:

Կախված դարձվածքի բաղադրիչների սերտության աստիճանից՝ լեզվաբանության մեջ ընդունված է տարբերակել հետևյալ միավորնե- րը. Ա) դարձվածքային սերտաճումներ կամ միակցություններ. այս տիպի կապակցություններում դարձվածքի իմաստը զգալիորեն հեռու է իր բաղադրիչների բառային իմաստներից, գործիմասկ **բարձրավիզ գոլ** - ամբարտավան լինել, **գալ ի խոստ** (348) - ցույց տալ, **ի կեր սրոյ լինել** (376) - սպանվել, **ի խսար արկանել** (368) - նեղություններ պատ- ճառել, **թուլութիւն սրտի** (56) - թուլամորթություն, վախ, **վճարել ի**

<sup>9</sup> Հմմտ. **Հ. Ջ. Պետրոսյան**, Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջք 175-176, **Պ. Ս. Բեդիրյան**, նշվ. աշխ., էջք 5-12:

**կենցաղոյս** (452) - վախճանվել, **մտանել յաւերաբանութիւն** (174) - դատարկաբանել, գազրախոսել, **պախուրցաթափ լինել** (318) - անգուսպ դառնալ, գազազել, **վերացուցանել զսուր** (272) - պատերազմը դադարեցնել, **վէմ աղամաղեայ** (388) - կարծր, գերսկզբունքային մարդ և այլն: Այս կարգի դարձվածքները Մատթեոս Ուռհայեցու երկում փոքրաթիվ են: Բ) Դարձվածքային միասնություններ. այս դեպքում դարձվածքի իմաստը հնարավոր է վերականգնել՝ ելնելով բաղադրիչների իմաստից, այսպէս՝ **ազգ օձից** (118) – չար, արյունարբու ազգ, **ի բաց թողուլ զաթոռն** (246) – հրաժարվել գահից, **հանել ոզին** (448) - հոզին ավանդել, **հեղումն արեան առնել** (336) – արյուն թափել, **ի մի ական քթթել** (444) – ասքը չթարթած, **խաւարեցուցանել զաչս** (460)- կուրացնել, **հոզին աւանդել** (288) – վախճանվել, **ընթանալ զհետ ցանկութեան մարմնոյ** (362) – տրվել մարմնական ցանկություններին, **ի տիղմն թաւալել** (296) – ստոր կյանքով ապրել, **զինեմխեալ լինել** (242) – հարբել, զգոնությունը կորցնել, **սեղան արկանել** (292) - սեղան բացել, հացկերույթ կազմակերպել, **մատնել ի բերան սրոյ** (200) - սրի քաշել, **հատանել մարդ** (322) - մարդաթափ լինել, **սուր ի գործ արկանել** (336) - սրի քաշել, **տատասկով լնուլ** (330) - անապատ դառնալ, **ցնդել յարտասուս** (436) - արտասվախառն ողբալ, կոծել, **փոխել զեաւ զգեստն** (102) - սգահան լինել և այլն: Դարձվածքային միասնությունները դարձվածքների ամենատարածված տեսակն են, և մեր ուսումնասիրած երկի բառապաշարում դրանք ակնհայտ մեծամասնություն են կազմում: Գ) Դարձվածային կապակցություն. տվյալ արտահայտություններում սերտաձման աստիճանը բավական թույլ է, և դարձվածքի իմաստը բխում է բաղադրիչների պահպանած ուղիղ իմաստից: Դարձվածքային կապակցություններ անմիջաբար կարող է ստեղծել գրողը, կրկնությունների շնորհիվ դրանք ձեռք են բերում կայուն կապակցության արժեք, օրինակ՝ **նետիւ հարկանել** (288) - նետահարել, **ջանս եւ աշխատութիւնս հասուցանել** (312) - ջանք ու եռանդ թափել, **գաղտնագնաց լինել** (346) - ծածուկ գնալ, **ի տան հանգուցանել** (318) - օթևան տալ, **սրով սատկել** (288) - սրով սպանվել, **սէր հաստատել** (278) - բարեկամանալ, **ամօթով դարձուցանել** (276) - խայտառակ, ամոթալի փախուստի մատնել, **ժրանալ ի պահպանութիւն** (406) - աչալուրջ հսկել, **ի հնարս սիրոյ մտանել** (450) - բարեկամություն հաստատել, **յարմատոյ հատանել** (450) - արմատախիլ անել, **զիտենալ հոգւով** (200) - ներշնչամբ հասկանալ և այլն: Նման դարձվածքներ Ուռհայեցին հաճախ է կիրառում, դրանց շնորհիվ ողբերգական դեպքերի ու փաստերի ժամանակագրության շարադրանքը դառնում է գունեղ ու տպավորիչ, հուզազգացական ապրումներ առաջացնող:

Իբրև յուրահատուկ տեսակ՝ ընդունված է առանձնացնել նաև դարձվածային արտահայտությունները, որոնք ակնհայտ փոխաբերական, այլաբերական ու պատկերավոր իմաստ ունեցող կայուն կա-

պակցություններ են, դրանց բաղադրիչների սերտաճումը, սակայն, գրեթե բացակայում է: Դարձվածային արտահայտություն ասելով՝ սովորաբար հասկանում ենք առածները, ասացվածքները, մաղթանքօրհնանքներն ու անեծքները, թևավոր խոսքերը, սպառնալի կամ փաղաքշական արտահայտությունները<sup>10</sup>: Մատթեոս Ուոհայեցու «Ժամանակագրութեան» տարբեր էջերում գտել ենք հիմնականում աստվածաշնչյան տարբեր գրքերի կամ մեկնությունների թևավոր խոսքերի նրբաճաշակ վերաշարադրումներ, երբեմն նաև իմաստային յուրօրինակ զարգացումներ, ինչպես նաև բանահյուսական աղբյուրներից ծագող այլևայլ դարձվածքային արտահայտություններ, զորօրինակ **բանավոր ոչխարք զգեցան զբնութին շանց եւ առին զսիրտ գագանաց, համարձակեցան հաջել յերեսս հովուացն** (246) - մտածող խոնարհները շան բնություն ստացան, գագանի սիրտ և համարձակվեցին խոսել տերերի առջև, **բուսանել ի սրտի բոյս չարութեան** (246) - սրտում չարության հունդը ծլել, **գայլ եղեն պահապանք հօտին Քրիստոսի** (246) - սրիկաները դարձան Քրիստոսին հավատացողների պահապանները, **գնալ ընդ ճանապարհս մեղաց** (294) - մեղսագործ լինել, **զկորին առիծու մի՛ արհամարհեցես, մինչեւ տեսանիցես** (14) - առյուծի ձագիկն չտեսած մի՛ արհամարհիր, **ճաշակել զճաշակ բաժակին, որ լցեալ էր մրրով դառնութեան** (296) - կյանքի դառնություններին ու փորձություններին ենթարկվել, **մտանել ի յօրհնեալ հող գերեզմանի** (220) - պատվով թաղվել, **յաղագս արծաթոյ ի բաց թողուլ զհաւատ** (78) - արծաթասիրության պատճառով հավատն ուրանալ, **նմանել Կայենի սպանողին** (18) - եղբայրասպան լինել, **ուտել եւ ըմպել զուսանօք եւ թմբկօք եւ երգօք** (22) - հեթանոս խրախճանք կազմակերպել, **մեծամեծս գերանս անտես առնել, փոքրագոյն շիւղ անուանել** (420) - սեփական մեծ արատները թերագնահատել, աննշան համարել և այլն: Վերջին դարձվածքը հատկապես ուշագրավ է. Ուոհայեցին, Մատթեոսի Ավետարանի հանրահայտ կոչի՝ «Կեղծաւո՛ր, հա՛ն նախ զգերանդ յականէ քումմէ, ապա հայեցիս հանել զշիղն յականէ եղբօր քո» (Է.5), փոխաբերությունները վարպետորեն օգտագործելով, նոր ասույթ է ստեղծում, որն արտացոլում է մարդկային վարքի դատապարտելի դրսևորումներից մեկը՝ սեփական սխալներն անտեսելը՝ իբրև աննշան «**փոքրագոյն շիւղ**»:

Դարձվածաբանական միավորները բառապաշարում համադրելի են բառերի հետ. դրանք պատրաստի և վերարտադրելի միավորներ են, որոնք, ի տարբերություն մնացյալ բառակապակցությունների, չեն կազմվում տվյալ խոսքային իրադրության պահանջով, այլ արդեն առկա են բառապաշարում և ամեն անգամ կարող են վերարտադրվել՝ ոճական գունավորում հաղորդելով խոսքին: Ամենակայուն դարձված-

<sup>10</sup> Տե՛ս **Հ. Զ. Պետրոսյան**, նշվ. աշխ., էջք 172-173:

քային միավորները կոչվում են հատկաբանություններ (իդիոմներ): Հատկաբանությունները առանձին լեզուներին բնորոշ յուրահատուկ բառային կապակցություններ են, որպես կանոն, դժվար թարգմանելի: Գրաբարյան բնագրերում հատկաբանություն կարող ենք համարել նույնարմատ գոյականների և բայերի գուգադիր կիրառությունները, որտեղ բայարմատը հանդես է գալիս որպես ուղիղ խնդիր՝ բառիմաստի խտացում ստեղծելով՝ **կոծել զկոծս** (76), **լաց լալ** (348), **բովանդակել անբովանդակելին** (188), **սօն սօնել** (188), **խորհել խորհուրդ** (120), **հաւատովն հաւատացեալ** (388), **ճաշակ ճաշակել** (202) և այլն, ինչպես նաև սեռականով ավելադրությունները՝ *զկամս ցանկութեան, զթիկունս օգնականութեան, սուր սուսերի, պատիւ պատկառանաց, այպն կատականաց* և այլք:

Դարձվածքների բաղադրիչների սերտության կամ տրոհելիության աստիճանների մասին խոսելիս պետք է անդրադառնալ մի կարևոր հանգամանքի. զգալի թվով դարձվածքների բաղադրիչներից որևէ մեկը կարող է փոխարինվել համարժեք բառով կամ բառաձևով: Պ. Բեդիրյանը մանրակրկիտ վերլուծում է դարձվածային տարբերակների առաջացման հիմունքները<sup>11</sup>, մենք անդրադառնանք դրանցից ամենագործուն տարբերակներին. ա) դարձվածքի բաղադրիչներից մեկը փոխարինվում է հոմանիշ կամ իմաստով առնչակից բառով, այս ճանապարհով առաջացած բազմաթիվ դարձվածքային տարբերակներ ենք գտել Ուռհայեցու «Ժամանակագրութեան» մեջ՝ **սուգ ածել** (136) → **կոծ ածել** (138), **ի հնագանդութիւն ածել** (96) → **կալ ի հնագանդութիւն** (136) → **զալ ի հնագանդութիւն** (64), **խաւար ունիլ** (62) → **խաւար կալնուլ** (62), **ի բերան սրոյ կոտորել** (54) → **մատնել ի բերան սրոյ** (200) → **ի բերան սրոյ հաշել** (202), **բարուք խոնարհ** (360) → **բարուք հեզ** (326), և բ) իրար փոխարինում են նույն բառի ձևաբանական տարբեր կառույցները, ընդամին՝ այս պարագայում տարբերակային կազմություններ կարող են առաջանալ և՛ բայական ձևերի փոխատեղմամբ, և՛ անվանական՝ **սրով անցանել** (376) → **սրով անցուցանել** (40), տվյալ օրինակում ներգործական սեռի բայը փոխարինվել է նույն բայի պատճառական տարբերակով, երկու դեպքում էլ դարձվածքը նշանակում է *սրի քաշել*, ունենք նաև հոլովական ձևերի փոփոխությամբ կամ նույնիմաստ նախդրավոր կառույցների շնորհիվ առաջացած տարբերակներ՝ **ի գիր արկանել** (62) → **արկանել գրով / գրով արկանել** (138)՝ բոլորը *նկարագրել, արձանագրել* իմաստներով, **ըստ կամացն Աստուծոյ** (34) → **կամօքն Աստուծոյ** (442) և այլն: Ուռհայեցու երկում գտել ենք նաև **u** հոդով դարձվածքային տարբերակներ՝ **առնել սէր եւ միաբանութիւն** (194) → **առնել սէրu եւ միաբանութիւնu**՝ *բարեկամանալ, միաբանվել, դաշնա-*

<sup>11</sup> Տե՛ս Պ. Ս. Բեդիրյան, նշվ. աշխ., էջք 214-216:



*կիցներ դառնալ* նշանակությամբ: Եզակի և հոգնակի հակադրությամբ կազմված նույնական դարձվածքներ ևս կան՝ **արեամբ ծածկել** (54) → **արեամբք ծածկել** (92) - *արյամբ ողողել* իմաստով կամ **գրով առնել** (192) → **գրովք առնել** (178) - *գրի առնել* և այլն: Եզակի և հոգնակի հակադրությունը կարող է արտահայտվել ոչ միայն ուղղականի **ք** հոգնակերտով, այլև հայցականի **ս** ձևությամբ, այսպես ունենք **քարայատակա առնել** - հիմնահատակ կործանել (24) ձևը և նրա **քարայատակ առնել** - (110) տարբերակը: Ընդհանրապես պետք է նշել, որ նախդիրները գրաբարում իմաստատարբերակիչ և բառակազմական մեծ դեր ունենին, որի շնորհիվ գործուն մասնակցում էին դարձվածքների կազմությանը, հին դարձվածքի նոր տարբերակների առաջացմանը: Աշխարհաբարում նախդիրների վերացումը հանգեցրեց դարձվածային տարբերակների զգալի նվազման:

Դարձվածքներն աներկբա կայուն բառակապակցություններ են, բայց այդ կայունությունը միանշանակ չի տարածվում դարձվածքի կազմում գտնվող բաղադրիչների շարադասության վրա, բառակապակցության ներսում հնարավոր է դարձվածքի և՛ գերադաս, և՛ կամրնտիր անդամների ազատ շարադասություն: Անգամ մեկ հեղինակի առանձին երկի դարձվածքների բառաշերտի մեր քննությունը ցույց է տալիս, որ գրաբարում դարձվածքների շարադասությունը բավական ազատ է. խոսքային հաղորդակցման շրթայում նրանք ազատորեն կարող են փոփոխել իրենց դիրքը՝ պահպանելով միասնական իմաստը և կառուցատիպը: Ուռհայեցին իր «*երկրապատմության*» (պատմիչն այս հետաքրքիր նորակազմությամբ է կոչում իր ժամանակագրությունը) տարբեր հատվածներում, ըստ ամենայնի էլնելով նյութի մատուցման տրամաբանական և զգայական շեշտադրումներից՝ հաճախ փոփոխում է դարձվածքների ներսում բաղադրիչների շարադասությունը՝ ամեն անգամ առաջադաս դարձնելով այն բառային միավորը, որն այդ խոսքային իրադրության մեջ նշանակության հիմնական կրողն է: Այսպես մեր ուսումնասիրած երկում կիրառական մեծ հաճախականություն ունեցող **մաշել ի սուր սուսերի** դարձվածքը գրեթե հավասար վիճակագրությամբ հանդես է գալիս մերթ փաթի առաջադաս դիրքով՝ **մաշել ի սուր սուսերի**, մերթ անվանական բաղադրիչի՝ **ի սուր սուսերի մաշել**: Բերենք բնագրային օրինակներ շարադասության բավանդակային արժեքն ակներև դարձնելու համար:

*Իսկ ի թուականին Հայոց ՆԿ գործողով արար թագաւորն Վասիլ եւ գնայր ի վերայ աշխարհին Բուլղարաց եւ յաղթեաց թագաւորութեան նոցա եւ մաշեաց ի սուր սուսերի զբազումս գաւառս մեծաւ բարկութեամբ... (52)*

*Եւ ահա անդ էր տեսանել զաստուածասաստ բարկութիւնն ի վերայ հաւատացելոցն Քրիստոսի, վասնզի առհասարակ մեծամեծք եւ*

*աղբասոք զմի ճաշակ դառնութեան ճաշակէին յանողորմ զազանէն ի չարաշունչ ազգէն թորքաց, եւ առհասարակ ի սուր սուսերի մաշեալ լինէր վայելուչ գաւառն այն...*(202)

Պ. Բեդիրյանը, համեմատելով գրաբարյան դարձվածքները աշխարհաբարյանների հետ, նշում է, որ գրաբարում երկանդամ դարձվածքները հաճախ կարող են ընդմիջարկվել դարձվածքից դուրս գտնվող բառով կամ բառերով, ըստ այդմ էլ եզրակացնում է, որ «...գրաբարյան դարձվածքներն իրենց կուռույթամբ զգալի չափով զիջում են աշխարհաբարյաններին»<sup>12</sup>, և իբրև օրինակ բերում է 5-րդ դարի մատենագրությունից (Մովսես Խորենացուց և Ղազար Փարպեցուց) նախադասություններ: Ուռհայեցու կիրառած դարձվածքների ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ գրաբարում դարձվածքների բաղադրիչները կարող են ընդմիջարկվել իրենց լրացնող նախադասության տարբեր անդամներով, սակայն դրանից դարձվածքի կուռ լինելու աստիճանը չի փոխվում, դարձվածքը բնավ չի տարրալուծվում, այլ նրա նշանակությունը մասնավորեցվում է, իսկ բաղադրիչների իմաստային կապը անմիջականորեն զգալի է: Բերենք մի օրինակ ցույց տալու համար, որ գրաբարում դարձվածքի բաղադրիչների փոխաբերական նշանակությունն ավելի ընդգծված է, քան աշխարհաբարում, այսպես՝ «Եւ զկնի այտորիկ դներ Տափարն յաթոռ թագաւորութեանն իւրոյ զաւագ որդին իւր զՄահմուտն եւ **տայր զամենայն Պարսիկս ի ձեռս** նորա. եւ զկրտսեր որդին զՄելեքն դներ զտուլտան ի Գանձակ քաղաքն Հայոց եւ **տայ զամենայն արեւելք ի ձեռս** նորա...» (372): **Տայ ի ձեռն** կամ **ի ձեռս** դարձվածքը նշանակում է «*հանձնել*», մեջբերված հատվածում, դարձվածքի բաղադրիչներն իրարից զատելով, մենք բնավ չենք կորցնում միասնական դարձվածային իմաստը: Այսինքն՝ իմաստաբանական տեսանկյունից գրաբարում դարձվածքները՝ որպես փոխաբերական կամ վերաիմաստավորված կապակցություններ, շատ ավելի կուռ կառուցվածքներ են:

Դարձվածքների քննության ժամանակ, հատկապես գրաբարյան, ակնհայտ է մի կարևոր յուրահատկություն. դարձվածքների կազմում միշտ առկա են պարտադիր բաղադրիչներ, առանց որոնց կապակցությունը դադարում է գոյություն ունենալ որպես կայուն և միասնական իմաստ ունեցող միավոր, բայց շատ անգամ այդ պարտադիր բաղադրիչները կարող են ստանալ լրացումներ՝ կախված անդամի խոսքիմասային բնույթից, այսինքն՝ գոյական անդամները ձեռք են բերում բնութագրական որոշիչներ, հատկացուցիչներ, իսկ բայ բաղադրիչները՝ պարագաներ կամ խնդիրներ: Բերենք համապատասխան օրինակներ Ուռհայեցու «Ժամանակագրութիւն»-ից: Այսպես, ունենք **լինել ի գի-**

<sup>12</sup> Պ. Ս. Բեդիրյան, նշվ. աշխ., էջ 218:

**նարբութեան** (86) «*գինարբութի տրվել*» նշանակությամբ դարձվածքը, որը Ուոհայեցին լրացնում է **մեծ** որոշչով՝ արբեցողությամբ զբաղվելու իմաստն առավել խորացնելու նպատակով: Նույն կերպ ունենք՝ **կոծ ածել** (136) → **մեծ կոծ ածել** (138), **ընկալնուլ զմահ** → **ընկալնուլ զմահս դառնաշունչս**: Կամ՝ **զալ ընդ իշխանութեան** (*հնազանդվել*) դարձվածքի «իշխանութիւն» բաղադրիչը կարող է ստանալ հատկացուցիչ՝ **զալ ընդ մերոյ իշխանութեան** (26), այսինքն՝ *հնազանդվել մեզ, մեր իշխանության տակ անցնել*: Նույնը **կոյս առնել** (*հարել*) դարձվածքի դեպքում. միշտ հնարավոր են լրացումներ → **ի մեր կոյս առնել** (28)՝ *մեզ հարել, մեր կողմն անցնել* (138): **Ի տան պատուով հանգուցանել** (318) դարձվածքի կազմում հիմնայինը **ի տան հանգուցանել** բաղադրիչներն են՝ «օթևան, իջևան տալ» նշանակությամբ, որտեղ բայական անդամը դարձվածքի նշանակած գործողությունը բնորոշող կամընտիր ձևի մակբայ է ստացել՝ **պատուով հանգուցանել**:

Դարձվածաբանության մեջ գերադաս (դոմինանտ) և կամընտիր (ֆակուլտատիվ) անդամների<sup>13</sup> նման տարբերակումը սկզբունքորեն կարևոր է, որովհետև դրա շնորհիվ բացահայտվում է դարձվածքների ձևավորման ընթացքը, առանձնացվում են միջուկային միավորները հետագա ճյուղավորումներից: Գերադասությունը որոշվում է թե՛ կառուցվածքային, թե՛ իմաստային բեռնվածության աստիճանով, այսինքն՝ դարձվածքի գերադաս անդամ կամ անդամներ կարող ենք համարել միայն այն բառերը, որոնց միջոցով արտահայտվում է դարձվածքի հիմնական իմաստը, և որոնք կապակցում են կամընտիր բառերը: Այսպես՝ **ի բաց թողուլ զաթոռն** (246) դարձվածքի մեջ (հրաժարվել զահից) **թողուլ զաթոռն** բաղադրիչներն են գերադաս, իսկ **ի բաց**-ը կամընտիր է: Նույն մակարդակում վերլուծելով **ի սուր սուսերի մաշել** դարձվածքը՝ տեսնում ենք, որ գերադասը **ի սուր մաշել** բաղադրիչների կապակցությունն է, **սուր** բաղադրիչի մահաբեր նշանակությունը ուժգնացնելու համար հավելել են նույն՝ զենք-զինատեսակի իմաստային դաշտին պատկանող **սուսերի** բառը՝ որպես կամընտիր: Կամ՝ **տաղտկալիս առնել մտաց** (192)՝ *ձանձրացնել, տաղտուկ պատճառել*, դարձվածքը, որտեղ գերադաս անդամներն են **տաղտկալիս առնել** բաղադրիչները, իսկ **մտաց**-ը՝ կամընտիր, այն լրացնում է տաղտուկ պատճառելու գաղափարը՝ ցույց տալով, որ տաղտուկը հատկապես մարդկային մտքին է վնասում:

Դարձվածքների գերադաս անդամների բառային իմաստների միջոցով էլ հնարավոր է առանձնացնել այն իմաստային դաշտերը, որոնց միավորներն ավելի հաճախ են դարձվածքներ ստեղծում, այսինքն՝ ունեն դարձվածաաստեղծ ներուժ: Ժամանակակից հայերենի

<sup>13</sup> Հմմտ. Պ. Բեդիրյան, անդ, էջք 89-99:

դարձվածքների վիճակագրության տվյալների հիման վրա Պ. Բեդիրյանը և Ե. Գևորգյանը առանձնացնում են այն հիմնական իմաստային դաշտերը, որոնց պատկանող բառերը արդի դարձվածքներում ամենակիրառականն են<sup>14</sup>: Առաջին տեղում մարդու մարմնամասերի իմաստային դաշտն է, որին պատկանող հասկացությունները գործուն դարձվածակազմիչ են: Այնուհետև կենդանանունների իմաստային դաշտն է, ապա բնության, աշխարհի, բուսանունների, մարդկային կենցաղի և հասարակական հարաբերությունների, մտքի ու գիտելիքի դաշտերը:

Իմաստային դաշտերի այս դասակարգումը բնորոշում է լեզվակիր հանրության աշխարհընկալման առաջնահերթությունները. ժամանակի հետ դրանք փոփոխվում են: Դիտարկելով Մ. Ուռհայեցու «Ժամանակագրության» դարձվածքները՝ պետք է արձանագրել, որ այստեղ ակնհայտ գերակայում են զենքի և ռազմական գործի իմաստային դաշտի բառերից կազմված կապակցությունները: Տվյալ իրողությունն ուղղակիորեն բացատրվում է և՛ Ուռհայեցու ապրած ժամանակաշրջանով, և՛ երկի բովանդակությամբ: Թուրքական ցեղերի նվաճողական և ավերիչ ասպատակությունների, մաշող տիրապետության դարաշրջանի պատմությունն է նկարագրվում (Ուռհայեցին պեչենեգներին և թուրքերին կոչում է «ազգ օձից» կամ «թեւաւոր օձք», քանզի նրանց տոհմի անունը՝ «ուզեր», համահունչ է օձ բառին)<sup>15</sup>, որը հայության կյանքում, պատմիչի ընկալմամբ, զուգորդվում էր հռոմեացիների դեմ նույնքան անողոր և աստելավառ դիմակայությամբ, որքան մահմեդականների դեմ պայքարն էր: Ուռհայեցին Հայ առաքելական եկեղեցու դավանաբանությունն ամենից վեր արժեք է համարում, իսկ հռոմեացիներին՝ նզովյալ: Ուստի նզովքի և հարձակողական ժամանակներում բարձրագույն արժեքը զենքն էր, հերոսությունը՝ կատարյալ նահատակության կարգավիճակը հոգևոր կամ իրական պատերազմներում: Բերենք զենքի և պատերազմի իմաստային դաշտին պատկանող բառերից կազմված դարձվածքների խորհրդանշական օրինակներ, որոնք հաստատում են այն ճշմարտությունը, որ հին և միջին դարերի ամենաժանտ ու կորստաբեր հայտնագործությունը սառը զենք էր, ի մասնավորի՝ սուրը՝ **անկանել ի սուր** (108, 200) – սրի քաշվել, **զնալ սրով հետ** (170) – սրով հետապնդել, **դիպչել միմեանց պատերազմաւ** (208) – պատերազմել, **թուրն կոտորել** (288) – սրահարել, թրատել, **ի բերան սրոյ կոտորել/ հաշել/ լինել** (54, 168, 202) – սրի քաշվել, սրահար լինել, **ի կեր սրոյ լինել** (376), **ի սուր եւ ի գերութիւն մտանել** (94) – սրի և գերության մատնվել, **թափուր ի սրոյ պատերազմի** (294) – անզեն, **հարկանել/հնչեցուցանել զփող պա-**

<sup>14</sup> Տե՛ս Պ. Բեդիրյան, նշվ. աշխ., էջք 91-92, Ե. Գևորգյան, Հայերենի դարձվածքները, Եր., 1969, էջք 91-99:

<sup>15</sup> Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 497:

**տերազմի** (212, 142) - պատերազմ հայտարարել, **մաշել ի սուր սուսերի** (26, 52, 118, 202, 220, 446...) - սրի քաշել, **մաշեալք լինել սրով եւ գերութեամբ** (143) - սրահար և գերեվար ոչնչանալ, **մատնել ի բերան սրոյ եւ յայրումն** (200) - սրի և հրի մատնել, **մատնել ի սուրս եւ ի գերութիւնս** (158) - սրահարել և գերեվարել, **մերկացուցանել զսուր պատենիցն** (34) - կովի նետովել, **նետիւ հարկանել** (288) - նետահարել, **սուր ի գործ արեան միւել / արկանել** (142, 336 ) - սրահարել, **սրոյ ճարակ առնել** (468) - սրի բերան դարձնել, **սրով եւ հրով կատարել** (380) - կովում զոհվել, **վերացուցանել զսուր** (272) - պատերազմը դադարեցնել...

Բնորոշ է, որ այս իմաստային դաշտի դարձվածքներում սուրը հաճախ զուգորդվում է հրի և գերության հետ, սուրը պատերազմի խորհրդանիշն էր, այն բարձրացնելը՝ հրադադարի նշան: Ուռհայեցու երկում 40-ից ավելի ռազմի և կոտորածի իրողություններ արտահայտող դարձվածքներ ենք գտել, բայց դրանց զգալի մասը հոմանշային հարաբերության մեջ են գտնվում, հատկապես սուր կամ արին բաղադրիչով կազմվածները:

Հաճախականությամբ երկրորդ տեղում մարդկային կյանքին, կենցաղին վերաբերող իմաստային դաշտի բառերից կազմված դարձվածքներն են, որոնք ցույց են տալիս պատերազմի դադարների կարճ պահերին ժողովրդի խաղաղ գործունեության վերսկսումը, անգամ խաղաղ մահվան համար առանձին դարձվածքներ էին ստեղծվում՝ ի հականիշ ռազմի դաշտում բռնի մահի: Այսպես ունենք՝ **վճարել ի կենցաղոյս** (452), **խաղաղական մահ առնուլ** (12) - խաղաղ վախճանվել, **սեղան արկանել** (272) - սեղան բացել, **ի տանս պատուով հանգուցանել** (272)- օթևան տալ, **ի վերին երեսս խաղաղութիւն առնել** (452) - առերես հաշտվել, **ուտել/ըմպել զուսանօք եւ թմբկօք եւ երգօք** (220) - խրախճանքի մեջ լինել, **արգելուլ վաստակ յերկրէ** (234) - հողն անմշակ դառնալ, **այպն կատականաց առնել** - ծաղր ու ծանակի ենթարկել (450) և այլն: Ուտելիքի և ըմպելիքի իմաստային դաշտի բառերը ևս դարձվածքներում գործուն են՝ **ապուր զուգել** (170) - ճաշ պատրաստել, **լինել ի գինարբութեան, նստել ի գինարբուսն** (86, 88) - գինարբուքի տրվել:

Այնուհետև բնության, շրջապատող աշխարհի իմաստային դաշտի միավորներից բաղադրված և վերաիմաստավորման տարբեր աստիճան ունեցող կապակցություններն են, որոնք լեզվի զարգացման բոլոր շրջաններում տարածված են, օրինակ՝ **արգելուլ ցոլն յերկնից** (290) – երաշտ լինել, **ցամաքել ի ջրոյ** (290) – ջրագուրկ լինել, **խաւար կալնուլ/ ունիլ** (62) - խավարը պատել, **երկինք պատառել զերկիրս** (62) – լուսատուների խավարում լինել, **ի տիղմն թաւալել** (296) - մեղքերի մեջ խրվել, **յաճախել հողմք** (210) – հողմակոծ, հողմահալած լինել, **ծով ծփել** (328) - ծովանալ, ահագնանալ, **վեմ աղամանդեայ** (388) – քարի պես ա-

մուր, հատու այր:

Զգալի է նաև կրոնի և հավատալիքների դաշտին վերաբերող դարձվածքների թիվը. Ուռնայեցին հոգևորական էր, իսկ պետականություննից զրկվող, թագավորներին ու իշխաններին կորցնող հայ ժողովրդի ապավենը մնում էր առաքելական եկեղեցին՝ **ննջել ի Յիսուս Քրիստոս** (64) - վախճանվել, **անկանել սին հաւատոյ** (324) – հավատը կորցնել, **առաքինի ի պահս եւ յաղօթս** (412) – պահեցող և աղոթող, **մարտիրոսական պսակ** (460) – նահատակություն, **եղծանել զհաւատ** (172) – հավատը շեղել, **բարձրացուցանել աշտարակ հաւատոյ** (172) – հավատը ամրապնդել, **ուտել ճաշ յարքայութեանն Աստուծոյ** (306) – դրախտ ընկնել և այլն:

Հայ մատենագրության մեջ կրթության և գիտելիքի դերը միշտ ընդգծված է եղել: Ուռնայեցին, պատմելով հայոց մեծերի վարքը, հատուկ շեշտադրում է նրանց գիտելիքների խորությունը, բանավիճային շնորհը, իմաստասիրությունը և իր պատմության մեջ բազմաթիվ դարձվածքներ է կիրառում, ինչպես օրինակ՝ **ի յամբիոնսն նստել** (198) - բարձր ատյաններում ներկայացված լինել, **լեզու հրեղեն ներկել** (326) - կրակոտ ճառախոս և քարոզիչ լինել (326), **անյաղթ ի պատասխանիսն** (174) - անպարտելի բանավեճերում, **հզօր յիմաստասիրական ջոկսն** (174) - գիտակ փիլիսոփայական հարցերում...

Մարմնամասեր նշանակող բառերից «Ժամանակագրութեան» մեջ հանդիպում են *արին, ակն/աչք, բերան, գլուխ, վիզ, մարմին, ձեռն, երես, լեզու, ունկն* բառերից կազմված հայտնի և նորագյուտ դարձվածքներ՝ **արեան ճապաղիս առնել** (116) - արյուն հեղել, **հեղումն արեան առնել** (336) - արյուն թափել, **մատնել ի բերան սրոյ** (102) - սրահարել, **խնուլ զբերան** (182) - լռեցնել, **գլուխ դաշտին** (352) - դաշտի վերևում, **հող արկանել զգլխով** (380) - ողբալ, **բարձրավիզ գոլ** (380) - ամբարտավան լինել, **ի մի ական քթթել** (444) - աչքը թարթելուն պես, **աչք տեսանել** (284) - ականատես լինել, **մատնել ի ձեռս սրոյ** (378) - սրահարել, **ընթանալ զհետ ցանկութեան մարմնոյ** (362) - հեշտասեր դառնալ, **արբուցանել զմաղձ սրտի** (158) - ճաշակել տալ մաղձը, **թուլութիւն սրտի** (56) - վախ, թուլամորթություն, **լեզու նենգաւոր** (118) - կեղծավոր, նենգ մարդ, **ունկն առնել** (432) - լսել և այլն:

Բուսանուններից և կենդանանուններից բաղադրված դարձվածքները շատ ավելի սակավաթիվ են, այս իմաստային դաշտերի բաղադրիչների վերաիմաստավորման կամ փոխաբերության աստիճանը բավական բարձր է, այսպես՝ **ազգ օձից** (118) - նենգ և անողորմ ցեղ, **ոչխարք զգեցան զբնութիւն շանց** (246) – խոնարհ մարդիկ գազազեցին, **զայլ լինել** (246) – արնախում այր դառնալ, **յարմատոյ հատանել** (450) - արմատախիլ անել, **բուսանել ի սրտի բոյս չարութեան** (102) - սրտում չար միտք հղանալ:

Եզրափակելով Մատթեոս Ուռնայեցու «Ժամանակագրության»

բնագրում կիրառված դարձվածքների մեր քննությունը՝ նշենք, որ 11-12-րդ դարերում գրաբարը ոչ միայն չէր կորցրել իր բառակազմական, իմաստային, ոճական ճկունությունը, այլև որպես գրականության լեզու ավելի հարուստ էր դարձել վկան՝ մեր քաղաք դարձվածքները, որոնց զգալի մասը վկայված չէ ՆՀԲ-ում կամ «Գրաբարի դարձվածաբանական բառարանում»: Փոփոխվող կյանքի ու ժամանակի, աշխարհընկալման մարտահրավերներին մեր հին լեզուն պատրաստ էր. նոր դարձվածքների, նոր բառիմաստների, նոր քերականական ձևերի ներթափանցումը գրաբար ստեղծագործողներին թույլ էր տալիս ցանկացած գեղարվեստական պատկեր, փիլիսոփայական, դավանաբանական միտք արտահայտել մեր հին գրական հայերենով ոճականորեն գունեղ և դիպուկ՝ առանց ավելորդ փոխառությունների: Դարձվածային այդ հարստության մի զգալի մասը աշխարհաբարը ժառանգեց, և պատահական չէ, որ գրաբար բնագրի աշխարհաբար փոխադրող Հրաչ Բարթիկյանը այդ դարձվածքներից շատերը պահպանել է աշխարհաբարով:

**Բանալի բառեր** - *գրաբար, դարձվածք, հատկաբանություն, դարձվածքի գերադաս և կամընտիր անդամներ, կառուցվածքային և իմաստաբանական քննություն, վերաիմաստավորում, փոխաբերություն, կայուն կապակցություններ*

**НАРИНЕ ДИЛБАРЯН – Анализ фразеологизмов в древнеармянском оригинале “Хронографии” Маттеоса Урхаеци.** – Фразеологизмы – своеобразные лексические единицы, которые тесно связаны не только со словообразовательной системой языка, но и с особенностями мировосприятия его носителей, с их менталитетом, способностью мыслить метафорически, переосмысляя понятия и обогащая их семантическое содержание. Фразеологизмы рождаются в разговорной речи, потом, проходя стилистическую обработку, становятся частью литературного и научного языков. В статье проанализированы древнеармянские фразеологизмы в “Хронографии” Маттеоса Урхаеци, написанной на стыке X–XI вв., когда грабар уже не был разговорным языком, но по-прежнему оставался языком литературы и науки. Словообразовательный и семантический анализ фразеологизмов Маттеоса Урхаеци показывает большой лексический потенциал грабара, отражённое в нём метафорическое мышление эпохи. В статье выписаны 23 фразеологических оборота и 235 фразеологизмов, большинство которых (196) суть глагольные единицы, 31 – прилагательные или существительные, 8 – наречия. Многие фразеологизмы перешли из лексики грабара в словарный запас современного армянского языка.

**Ключевые слова:** *древнеармянский язык, фразеологизм, идиома, доминантный и факультативный член предложения, словообразовательный и семантический анализ, переосмысление, метафора, устойчивые фразы*

**NARINE DILBARYAN – Phraseologisms of Ancient Armenian Language in “Chronography” by Matteos Urhaetsy.** – Phraseologisms are specific lexical units that are closely related not only to the word-formation system of a language but also to the features of the worldview of native speakers, to their mentality, ability to think meta-

phorically, to rethink different concepts, enriching their semantic content. Phraseologisms, in the beginning, are born in colloquial speech, then undergo literary processing, and become part of the literary and scientific languages. In this study, we analyzed phraseologisms of Ancient Armenian in the “Chronography” by Matteos Urhaety. “Chronography” was written at the junction of the X-XI centuries when Grabar (Ancient Armenian) was no colloquial but continued to be the language of literature and science. The word-formation and semantic analysis of the phraseological units of Matteos Urhaetsy shows the great lexical potential of Ancient Armenian language, the metaphorical thinking of that time. We wrote down 23 phraseological expressions, 235 phraseologisms, most of which are 196 verbal units, 31 are adjectives or nouns, 8 are adverbs. Many of these idioms from the Grabar vocabulary were transferred to the vocabulary of the modern Armenian language.

**Key words:** *Ancient Armenian, phraseologism, idiom, dominant term of phrase, optional term of phrase, derivational and semantic analysis, rethinking, metaphor, stable phrases*

Ներկայացվել է՝ 03.02.2019

Գրախոսվել է՝ 13.02.2019

Ընդունվել է տպագրության՝ 28.06.2019